

լայն արձագանգ տալու նար-Գոսի յորելեանին:

Տեղի ունեցաւ զեկուցում նար-Գոսի 45 ամեայ զրական գործունէութեան մասին Հաւարարի կառուցողների ակումբում:

Ռուսաստանի Պետհրատը լոյս ընծայեց ուսերէն լեզուով նար-Գոսի «Մահը» մեծ վէպը, Արտ. Տէր-Մարտիրոսեանի թարգմանութեամբ:

— Ստեփան Զօրեանի պատմութեանը ռուսերէն. — Ռուս Պետհրատը լոյս ընծայեց արձակագիր Ստեփան Զօրեանի պատմութեանը ներքէ կրկնորդ գիրքը:

Գ. Սարեանի «Աչք» պիէսը. — Լենինականի թատրոնը մօտ օրերս բեմադրելու է Գեղամ Սարեանի «Աչք» պիէսը:

«Լուսաբաց».— Լոյս տեսաւ Վրաստանի գրողների հայկական սեկցիայի օրգան «Լուսաբաց»-ի թիւ 5ը, նուիրուած խորհրդային Հայաստանի սանտաճեակին:

— Պայագատի «Մանր մարդիկ».— Հայաստանի Պետհրատը լոյս ընծայեց չորհրդային գրող Պայագատի «Մանր մարդիկ» գրուածքների ժողովածուն:

— Գրական դասախօսութիւններ Երեւանում. — Երեւանում Գրողների Տանը կազմակերպուեցին մի շարք դասախօսութիւններ պարտէա-գրողների նոր երկերի մասին: Զգալի աջողութիւններ են ցոյց տուել նայիրի Զօրեանը, Վաղարշակ Նարեկցի և ուրիշներ:

Շիրվանցատէ առողջացած. — Շիրվանցատէ, որ թոքերու բորբոքումով ծանրապէս հիւանդ էր, Երեւանի պետական հիւանդանոցին մէջ մեծ խնամքով դարմանուելով, բուժուած է, և արդէն դարձած է թիֆլիս:

Գերեմիկ Գեմիրջեանի 35 ամեայ յարելեանը. — Յունիսի 22ին Կուլտուրայի Տանը, հոծ մասսայի ներկայութեամբ տօնուեց Գերեմիկ Գեմիրջեանի զրական 35 ամեայ գործունէութեան յորելեանը: Հանդէսին նախագահող Լուսաւորութեան ժող. կոմ. Արտ. Եղիազարեանի ներածական խօսքերից յետոյ, ողջոյնի ուղերձներ արտասանեցին զրական, պրոֆ-միութեանական և հասարակական կազմակերպութիւնների բազմաթիւ ներկայացուցիչները որոնք նշում էին յորելեանի ստեղծագործութեան ուժը և նրա երկերի ներդաշնակութիւնը մեր ժամանակին: Իր խօսքի մէջ յորելեանը շնորհակալութիւն յայտնելով ողջունողներին,

յայտարարեց որ իր հետագայ ստեղծագործական աշխատանքում կը զեկալարուի կոմկուսի գրոյթներով:

Հայաստանի կառավարութիւնը Գեմիրջեանին նշանակել է անհատական թոշակ և ամսական 200 սուրբի, տալով նաև միանուագ 1000 սուրբի: Հայաստանի Պետհրատը հրատարակում է Գեմիրջեանի երկերի լիակատար ժողովածուն:

Թ. Ղ. Թ. Ա. Կ. Ի. Յ.

USUՅԱՆՔ

ARSÈNE YERGATH. — *Les Cyprès embrasés, suivis des Stances à Astrée, Poèmes, préface d'Octave Charpentier. Bandeaux et culs-de-lampe de la collection Poésie. Editions de «La Caravelle», Le Livre et l'Image, 6 rue Bezout, Paris, 1930.*

ՀԱՄԲՍՐԱԳՈՒՄ ԵՐԱՄԵԱՆ. — «Յուշարձան Վան - Վասպուրականի»: Երկու ստուար գեղակազմ հատար, պատկերազարդ: Հրատարակութիւն «Յուշարձան»-ի Կեդր. Հրատ. Յանձնախումբի, Աղեքսանդրիա, տպագրութիւն Արամ Գասապեան: Գին երկու հատորներու, 120 էգիպտ. դահեկան:

ՏԻԳՐԱՆ Թ. ՍԱԻԱԼԱՆԵԱՆՅ (նախկին դաստառ ժառանգաւորաց և քարտուղար Պատրիարքարանի Սրբոց Յակոբեանց Վանուցն Ս. Երուսաղէմի) «Պատմութիւն Երուսաղէմի»: Գրաբար բնագրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեան: Երկու ստուար հատար: Երուսաղէմ, տպարան սրբոց Յակոբեանց, 1831: Իւրաքանչիւր հատորի գինը՝ երկու շիլին:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐԲԵՊՍԿ. ՕՐՄԱՆԵԱՆ. — «Խոհք և Խօսք», իր կեանքին վերջին շրջանին գրուած. (յետ մահու հրատարակութիւն): Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1929: Գին չորս շիլին:

ՄԱՏԹԷՆՈՍ ԴԱՐՔԻՆԵԱՆ. — «Կիկոսը», վիպակ: Պետական Հրատարակչութիւն, Երեւան, 1929: Գին 50 կոպէկ:

Մ. ԴԱՐՔԻՆԵԱՆ. — «Նորը», պատմութիւն Վրաստանի Պրուկա-Գրողների Աստուխայիա, հայկական սեկցիա, թիւ 6, թիֆլիս, 1929: Գին 15 կոպէկ:

Մ. ԴԱՐՔԻՆԵԱՆ. — «Փարսազան», պատ-

մուսձք. Սախելյանի. Թիֆլիս, 1930: Գին 30 կոպէկ:

ԱՐՁԱԳԱՆԳ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ. կրօնաբարոյական եւ առողջապահական ամսաթերթ: Խմբագիր՝ Պերճ Արմենակեան, 8, rue de Prague, Paris. Տարեկան բաժնեկիրն՝ Ծրանսա եւ Սուրբա 10 ֆր., արտասահման 15 ֆր., Ամերիկա 75 սենթ:

ԲԱՐԳԷՆ ԵՊՍԿ. ԿԻՒԼԵՍԷՐԵԱՆ. — «Հայ Եկեղեցի», ուսումնասիրութիւններ (Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ. — Հայ. Եկեղեցւոյ զիբքը Քրիստ. Ընդհ. Եկեղեցւոյ մէջ. — Առաքելութիւն Հայ Եկեղեցւոյ. — Պետութիւն եւ Եկեղեցի): Արտատպուած «Սին» ամսագրէն: Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակօբեանց, 1930: Գին մէկ շէլին:

ԼԻՈՆԱԶԱՅ ՈՒՂԵՅՈՅՅ. — «Տարեցոյց», պատկերազարդ եւ քարտիսաւոր: Առաջին տարի, 1931: Հրատարակութիւն Տպարան «Եփրատ», 34, rue Villeroy, Lyon: Գին 7 ֆր.:

ԱՂԲԱՏՈՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՓԱՐԻՉԻ ՀԱՅՈՅ, «Տեղեկատուութիւն» 40րդ տարեշրջանի, 1930: Փարիզ, 1931:

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՏԵԼԻՔ»-Ի, ԹԻՒ 1. — «Պաղատա ծառերը», քաղեց Յ. Ք. Աթանասեան, 1931, Ծրումոստա: Գին 15 լէյ, արտասահման 3 ֆրանք: Դիմել՝ Librairie Frumoasa, Jud. Ciuc. Frumoasa, Roumanie:

Հ. ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆ. — «Սեւ Էջը», վիպակ: Բ. տպագրութիւն, Ծրումոստա, 1931, նոյն հասցէ: Գին 40 լէյ, արտասահման 4 ֆր.:

ԿՐԼԻԿԻՍ ԳՐԱՎԱՃԱՌՈՒՄՆՈՅ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՏՈՒՆ. — «Լիակատար պրացոցակ», 10րդ տպագրութիւն: Cilicia Book Store, 97 Lexington avenue, New York, N. Y. (U. S. A.):

ՀԱՆՐԻ ՊՈՐՏՕ. — «Բուրդէ շրջագրեալը», վէպ: Թարգմանեց Բերուզ Զ. Խօրասանեան, Կ. Պոլիս, Տպագրութիւն Յ. Մ. Ալթեան, 1930: Գին 100 դրուշ:

ԶՄԱՆԱԴՈՒՆ. — Գրեց՝ Արիս Տ. Կ. Գալֆաեան: Հրատարակութիւն Զօմարտի նպատամատոյց Ընկերութեան: «Կոչնակ» տպարան, Նիւ Եորք, 1930: Գին 2 տպար: Դիմել՝ H. Asadourian, 245, 5th avenue, New York City, U. S. A.:

BIBLIOTHÈQUE K. J. BASMA-

DIJIAN. II. — *Les Inscriptions arméniennes d'Ani, de Baugnair et de Marmachen*, recueillies sur place et publiées avec leurs traductions françaises, par K. J. Basmadjian (Extrait de la «Revue de l'Orient Chrétien»), Paris, Typographie Firmin-Didot et Cie, 1931. Տպուած 100 օրինակ (պատկերազարդ): Գին՝ 200 ֆրանք: Դիմել Կ. Յ. Բասմաճեան, 9, rue Gazan, Paris:

ՓՇՐԱՆՔՆԵՐ ԶՈՒՂԱԶԱՅ ԵՒ ՀՆԴԿԱԶԱՅ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ («Տարեք եւ ժողովրդական երգեր») 17—19րդ դար: Գրեց Արամ Երեմեան: Վիեննա, Միսիթարեան տպարան, 1930: Գին 1 ֆրանք:

LA PROTECTION INTERNATIONALE DES MINORITÉS, par André Mendelstam. Première partie, la protection des minorités en droit international positif. — Librairie du Recueil Sirey, 22, rue Soufflot, Paris, 1931.

ՄԱՏԵՆԱՇԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ, ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԳԻՐ, Հատոր Գ. Տ. Ղեւոնդ Երեց պատմագիր, 9. Ղեւոնդ Երեց եւ Մոզէս Խօրենացի, 10. Հայ Բազրատունիներու տոհմաձայր: Գրեց Հ. Ներսէս Վ. Ակինեան: Վիեննա, Միսիթարեան տպարան, 1930: Գին 4 ֆրանք:

ԹՈՒՂԹ ՄԱԿԱՐԱՅ Բ. Երուսաղէմի Հայ-բապտիստ վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ: Նըպատա մը Զ. դարու Հայոց եկեղեցական պատմութեան: Աշխատասիրեց Հ. Ներսէս Վ. Ակինեան: Վիեննա, Միսիթարեան տպարան, 1930: Գին 1.50 ֆր.:

ԻՍԼԱՄԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱՇԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ, Ա. Գրիգորի Տաթևացւոյ ընդդէմ Տաճկաց. Բ. Ի Քաշունէ քաղաձու: Ուսումնասիրեց եւ հրատարակեց Բարզէն եպսկ. Կիւլեւեթեան: Վիեննա, Միսիթարեան տպարան, 1930: Գին 3 ֆր.:

ԱՐԱՅ ԳԵՂԵՅԻԿ, Համեմատական քննական ուսումնասիրութիւն: Գրեց՝ Հ. Ալեքսանար Վ. Մատիկեան: Վիեննա, Միսիթարեան տպարան, 1930: Գին 4 ֆրանք:

ՎԱՀՐԱՄ ՍՕՅԵԱՆ. — «Քիչ մը երկիրք», բանաստեղծութիւններ, 1931, Նիւ Եորք:

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ. — Գեղամ Տէր Կարապետեան. Մատենաշար, Թիւ 3. — Տարօնի Աշխարհ, պատկերներ ու

պատմուածքներ: Փարիզ, 1931: Գին 30 ֆր., 1-50 տուլար: Դիմել՝ Dr. L. Krikorian, 126 Faubourg St. Denis, Paris:

— Նոյն Մատենաշար, թիւ 4.— Գեղամ Բարսեղեան, Ամբողջական զործը: Փարիզ, 1931: Գին 20 ֆր., 1 տուլար:

Ռէն — Գնդակահարուածները, վէպ ուսական մեծ յեղափոխութիւնից: Փարիզ, 1931: Գին՝ 20 ֆրանք, արտասահման 1 տուլար: Դիմել՝ M. Altounian, 17 rue Ampère, Cachan (Seine):

ՆԱԻՐԻ ԱՇԽԱՐՀ. — Պատկերազարդ ամսաթերթ (8 էջով): Խմբագիր՝ Ս. Թորոսեան, 5, Rue des Gobelins, Paris: Տարեկան բաժնեկիր՝ Ֆրանսա եւ գաղութներ 18 ֆրանք, արտասահման՝ 20 ֆրանք, Ամերիկա՝ 1 տուլար:

ԿԱՄԲ, պաշտօնական ամսաթերթ «Որդիք Հայաստանեայց»ի. ազգային, գրական, գիտական: Տարեկան բաժնեկիր 1 տուլար, 150 W. Larned St. Room 210, Detroit, Mich., U. S. A.

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՀԱՅԱՍՏԱՆ, շարաթատերթ օրկան Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան Ամերիկայի շրջանի. 9, P. O. Box, Mad. Sq. Sta. New York, N. Y.: Տարեկան բաժնեկիր 2 տուլար:

ԳԷՈՐԳ ՄԵՍՐՈՊ. — «Հայկարան» (պատկերազարդ պարբերազիրք): Մեսրոպեան ճեմարան, Բաղլոօօ, Սօֆիա, 1931: Գին 200 լեվա, 50 ֆր. կամ 2 տուլար: Հասցէ՝ Kévork Mesrob, Pavlovo, Sofia, 8, Bulgarie:

ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆԻ ԳՈՀԱՐՆԵՐԸ, Հատար Բ. (Իրախօսականներ, յողուածներ, հանդէսներ, թարգմանութիւններ, յառաջարաններ, ոտանաւորներ, տպուած եւ անտիպ նամակներ, ճտեր, առածներ): Պատրաստեց եւ հրատարակեց Մ. Կազմարարեան: Տպագր. Մ. Տէր Սահակեան, Պոլիս, 1931: Գին 200 դրուշ, արտասահման 1 տուլար 50: Դիմել՝ Ս. Յակոբեան Դրատուն, 20, rue Tchakmakdjilar, Constantinople, Turquie:

ՄԵՐ ՈՒՂԻՆ, քաղաքական - հասարակական-գրական երկօրեայ թերթ: Ա. տարի: Բաժանորդագիրն Ֆրանսա եւ գաղութներ՝ տարեկան 70 ֆրանք, վեցամսեայ 35 ֆր., արտասահման՝ տարեկան 5 տուլար, վեցամսեայ՝ 3 տուլար, Պալքաններ՝ տարեկան 100 ֆր., վեցամսեայ՝ 55 ֆրանք: Հասցէ՝ Mer Oughine,

Rédaction-Administration, 23bis Boulevard Arago, Paris:

ՊԱՏԱՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ, հատար թիւ 4.— Հրատարակութիւն Սահակ Մեսրոպ տպագրատան: Պատմուածքներ Տոլատոյէ. Պահով. Մարդ մը ո՛րչափ հողի պէտք ունի. թարգմ. Լեւոն Պ. Գալէմքեարեան: Հատար ձեռքէ մէկ եղիպա. դահեկան: Բաժանորդագրութիւն 12 թիւը 10 եգ. դհ.: Հասցէ՝ Sahag - Mesrob Press, 25 Sh. Tefvik, Le Caire, Egypte:

— Նոյն մատենաշար, թիւ 5, Պանտորա, Նաթանիէլ Հաթհարնի. թիւ 6, պատմուածքներ Տոլատոյէ (Եղիա, Փոքրերու իմաստութիւնը, Չար ողին ու Հացի կտորը):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍԵԱՆ. — «Երկու Ամիս Հայաստանի մէջ» (թուրխտական Հայաստան — Հայաստանի իրաւակարգը եւ կենցաղը — Մշակութային Հայաստանը) պատկերազարդ ստուար հատար մը: Տպարան «Պայքար»ի Պոթոն, 1931: Գին, թղթակազմ՝ 1.50 տուլար կամ 37.50 ֆր., լաթակազմ՝ երկու տուլար կամ 50 ֆրանք: Դիմել հեղինակին՝ O. Boghossian, Journal «Abaka», 227 Boulevard Raspail, Paris:

Հ. Ս. Խ. Հ. Լուսժողիմատ — Պետական Համալսարան, — Ս. Մանուկեան, Յովհ. Թումանեանի «Անուշ»ը (բանասիրական եւ գեղարուեստական վերլուծում): Արատապութիւն Հ. Ս. Խ. Հ. Պետական Համալսարանի «Դատական Տեղեկագրի» թիւ 6ից: Երևան, 1931: Գին 50 կոպէկ:

ABBÉ D. KAYETANOWICZ. — La cathédrale arménienne de Lwow et son entourage — Guide. Traduit du polonais par B. et G. Keuprulian, Lwow, 1931 (պատկերազարդ):

AGAH CATCHIK ARRAKIEL, by Mesrovb I. Seth.— A paper read at the Meeting of the Indian Historical Records Commission held at Patna in December, 1930.— Price, eight annas.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ. — «Ողբ Հայրենասիրի» — (Վէրք Հայաստանի), պատմական վէպ. Դ. տպագրութիւն բնագրին: Դրատուն Պ. Չարգարեան, Կ. Պոլիս, 1931: Չարմաքճըլար, թիւ 73: Գին 200 դրուշ:

ARMENIANS at Agra and Gwalior from

the days of Akbar the Great to the indian mutiny of 1857, by Mesroby I Seth, M. R. A. S. Calcutta, 1930:

ՎՍՍՏԱԿ, պարբերաթերթ առևտրական, անասնական և ելեւմտական: Արտօնատէր և պատասխանատու անօրէն Արտաշէս Գալփաքճեան: Թիւ 1—2: Կ. Պոլիս: Boîte postale, No. 393, Yéni Djami, Istambul, Turquie.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ
ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Ներկայ թիւով կը սկսի ԱՆԱՀԻՏԻ նոր շրջանի երրորդ տարին: Այս թիւը լոյս կը տեսնէ ծանուցուած թուականէն 5—6 շաբաթ ուշ, և՛ բաղկացած 192 էջէ՛ կը ներկայացնէ կրկնակ թիւ մը (1—2): Յաջորդ չորս թիւերէն երեքը պիտի բաղկանան ըստ սովորականին 128 էջէ, ճրգ թիւը դարձեալ պիտի ունենայ 192 էջ:

Այս փոքրիկ «անկանոնութիւնները», զոր անգամ մը եւս թոյլ կուտանք մեզի, արդիւնք են մէկէ աւելի լուրջ պատճառներու զոր հոս պարզել աւելորդ կը նկատենք: Գիտենք որ նորէն ասոր համար զանգատողներ պիտի ըլլան. միանգամ ընդ միշտ ըսենք որ մենք տպագրուած թղթի վաճառական չենք և այս հանդէսը լրագրական ամսաթերթի ձեւով չէ որ յղացած ենք, այլ իբր շաբթ մը զրական հաւաքածուներու որ մնացուն արժէք ունեցող արտագրութիւններով մեր արդի մատենագրութեան իրական ճոխացմանը նպաստեն: Ուրախ ենք հաստատել կարենայու որ եթէ մերթ գանգատողներ պատահեցան հրատարակման յապաղումներէն կամ երկու թիւի կցումէն, ասոնք քիչ են թիւով, և մեր ընթերցողները, ամենամեծ մասամբ, մեր բուն ծրագիրն ու նրպասակը լիովին ըմբռնած են և, այդ նիւթական թերութեանց մասին ներողամիտ, գնահատական ջերմ արտայայ-

տութիւններով մեզ խրախուսած են:

Ճշգրիտ ըմբռնումի և ազնիւ գընահատումի ամենասիրտն այդ արտայայտութիւններէն մին գտանք Աելանիկ հրատարակուող Արեւիք օրաթերթին, որ իմաստուն ու վառ հայրենասիրութեան համակրելի օրկան մըն է, սա տողերուն մէջ. «Անահիտի ամէն մէկ թիւը անակնկալ մըն է հայ գրական և գեղարուեստական աշխարհին համար, որ այժմ այնքան նիհարցած է և տժգունած: Գրական հանդէս մը չէ Անահիտը, այլ անոր ամէն մէկ հասարակ զիրք մըն է հոյակապ, որ անցեալի քաղցր օրերը կը կապէ մեր այսօրուան ազգային կեանքին և հայրենի ապրումներուն, և որ ցոյց կուտայ նոր ծիլեր ու ծագիլներ որոնք վաղուան մեր գեղեցիկ գարունը կ'աւետեն»:

Այս ձեւով — որ արդար ձեւ մըն է — ըմբռնուած Անահիտէն՝ մեր բոլոր ընթերցողները պէտք է ուրեմն սպասեն, ոչ թէ անոր հրատարակման մեքենական կանոնաւորութիւնը, — որուն նաև օր մը նորէն հասնիլ կը փափաքինք անչուչտ և կը յուսանք, — այլ իր պարունակութեան յարաձուն բարձրացումը, որ մեր գլխաւոր նպատակակէտն է:

Մեր փոքրիկ անկանոնութիւնները, ամէն պարագայի մէջ հեռու են մեր բաժանորդներու մէկ մասին — մէկ բաւական կարեւոր մասին — վճարման ծայրայեղ անկանոնութեանը հաւատարել: Աւելի քան երեք ամիս է որ երկրորդ տարեշրջանը լրացաւ, և այդ տարեշրջանի բաժնեգիրներէն ստուար թիւ մը գեռ անվճար կը մնայ . . . : Կը յուսանք որ երրորդ տարուան ընթացքին մեր ընթերցողները իրենց բարոյական գնահատման ջերմութեանը պիտի ջանան զուգորդել իրենց բաժնեգիրն արագ վճարման զրական տուքինութիւնը:

Ա. Զ.